




IOM International Organization for Migration

# Սահմանային տեխնիկական կարիքների գնահատում Հայաստան



Այցեր Բավրայի սահմանային անցակետ և Ջվարթնոց  
միջազգային օդանավակայան

2011թ. մայիսի 21-ից 24-ը



IOM International Organization for Migration  
OIM Organisation Internationale pour les Migrations  
OIM Organización Internacional para las Migraciones



United States Department of State  
Bureau for International Narcotics and Law  
Enforcement Affairs

Ծրագիրը ֆինանսավորվում է ԱՄՆ  
Կառավարության կողմից

Սույն հաշվետվությունում արտահայտված տեսակետների համար պատասխանատվությունը կրում են հեղինակները, և դրանք անպայմանորեն չեն արտացոլում Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) դիրքորոշումները: Այցերի համար ընտրված վայրերը և հաշվետվությունում ներկայացվող նյութերը չեն ենթադրում որևէ երկրի, տարածքի, քաղաքի կամ վայրի կամ իշխանությունների, ինչպես նաև երկրի սահմանների մասին ՄՄԿ-ի կողմից որևէ կարծիքի արտահայտում:

ՄՄԿ-ը հավատարիմ է այն սկզբունքին, որ մարդասիրական ու կարգավորված միգրացիան շահեկան է միգրանտների ու հասարակության համար: Հանդես գալով որպես միջ-կառավարական կազմակերպություն՝ ՄՄԿ-ը գործակցում է միջազգային համայնքի իր գործընկերների հետ, որպեսզի աջակցի միգրացիայի հետ կապված գործառնական դժվարությունների հաղթահարման խնդրում, բարելավի միգրացիոն հարցերի ըմբռնումը, խրախուսի միգրացիայի միջոցով սոցիալական ու տնտեսական զարգացումը և պաշտպանի միգրանտների մարդկային արժանապատվությունը և բարեկեցությունը:

Տեխնիկական կարիքների գնահատման նպատակն է վերացնել ներկայիս սահմանային ենթակառուցվածքներում առկա թերությունները և դրանով իսկ խթանել ու բարձրացնել Հայաստանի որոշ սահմանային անցակետերում սահմանային հսկողության արդյունավետությունն ու էֆեկտիվությունը՝ հաշվի առնելով նախորդ և ընթացիկ միջոցառումները, միջազգային դոնորների աջակցությունը և ՀՀ ներդրումները:

Ֆրանց ՊՐՈՒՉ, ՄՄԿ-ի Տեխնիկական համագործակցության գծով մասնագետ  
ՄՄԿ տարածաշրջանային գրասենյակ, Վիեննա

ՄՄԿ-ի Հայաստանի առաքելության գրասենյակի ղեկավար տիկին Իլոնա Տեր-Մինասյան  
ՄՄԿ-ի Հայաստանի առաքելության ծրագրերի մշակման և իրականացման բաժնի ղեկավար տիկին Քրիստինա Գալստյան  
ՄՄԿ-ի Հայաստանի առաքելության ծրագրերի մշակման և իրականացման բաժնի ծրագրի համակարգող տիկին Նունե Ասատրյան

ՄՄԿ-ի Հայաստանի առաքելության գրասենյակի վարչական և կազմակերպչական աջակցությամբ

2011թ, մայիս

# Սահմանային կառավարման տեխնիկական կարիքների գնահատում

Այցեր Բավրայի սահմանային անցակետ և  
Ջվարթնոց միջազգային օդանավակայան

2011թ. մայիս



IOM International Organization for Migration

# Բովանդակություն

ԱՄՓՈՓԱԳԻՐ .....	4
ԳԼՈՒԽ 1. ԲԱՎՐԱՅԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՆՑԱԿԵՏ.....	8
ԳԼՈՒԽ 2. ԶՎԱՐԹՆՈՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆ .....	15
ԳԼՈՒԽ 3. ԵՐԿԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅՑ ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՈՐՔԵՐԻ ԳԼԽԱՄԱՍՍԱՅԻՆ ՆՈՐ ՇԵՆՔ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ.....	19
ԳԼՈՒԽ 4. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՑԱՆԿ .....	23


# Ամփոփագիր

Հայաստանի Հանրապետությունը գտնվում է Անդրկովկասի հարավում, իսկ զբաղեցրած ընդհանուր տարածքը 29,800 քառ. կմ է: Բանկչության թիվը (1996թ. դրությամբ) 3,766,400 մարդ է: Պետական լեզուն հայերենն է: Մայրաքաղաքը Երևանն է (1996թ. դրությամբ՝ 1,249,400 բնակիչ):

Հայաստանը հյուսիսից սահմանակցում է Վրաստանին, արևելքից ու հարավից՝ Ադրբեջանին, հարավից՝ Իրանին, իսկ արևմուտքից՝ Թուրքիային: Հայաստանի պետական սահմանների ընդհանուր երկարությունը 1,422 կմ է, ներառյալ 190 կմ Վրաստանի, 910 կմ՝ Ադրբեջանի (այդ թվում Նախիջանին), 42 կմ՝ Իրանի և 280 կմ՝ Թուրքիայի հետ: Ուղիղ գծով Հայաստանի և Սև ծովի միջև հեռավորությունը 145 կմ է, Հայաստանի ու Կասպից ծովի միջև հեռավորությունը 175 կմ է: Միջերկրական ծովից ուղիղ գծով Հայաստանը գտնվում է 750 կմ, իսկ Պարսից ծոցից՝ 1000 կմ հեռավորության վրա:

2009թ. ի վեր ԵՄ-ը ֆինանսավորում է Աջակցություն Հարավային Կովկասում միասնական սահմանային կառավարման համակարգերին (SCIBM) ծրագիրը, որը Հայաստանում նախաձեռնվել է այն բանից հետո, երբ Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի կառավարությունները 2007թ. հոկտեմբերի 10-ին ստորագրել են Կառավարական հայտարարագիրը: SCIBM-ի ծրագրի ընդհանուր նպատակն է Հայաստանում, Վրաստանում ու Ադրբեջանում ներդնել միասնական սահմանային կառավարման սկզբունքներն ու եղանակները, ինչպես նաև ամրապնդել Հարավ-Կովկասյան երկրների, ԵՄ-ի անդամ պետությունների և միջազգային այլ շահագրգիռ կողմերի միջև միջ-գերատեսչական, երկկողմ ու տարածաշրջանային համագործակցությունը և դրանով իսկ դյուրինացնել մարդկանց և ապրանքների օրինական սահմանափակումներն ու միաժամանակ պաշտպանել սահմանների ապօրինի գործողություններից:

2010թ. սեպտեմբերի 25-ին Հայաստանի Ազգային անվտանգության խորհուրդը մշակել ու հաստատել է ՀՀ Սահմանային անվտանգության և պետական սահմանների միասնական կառավարման ռազմավարությունը, որը ստորագրվել է ՀՀ Նախագահի կողմից նոյեմբերի 3-ին: Հայաստանի Կառավարությունը մշակել է նաև 2011-2015թթ. ՄՄԿ-ի գործողությունների ծրագիրը, որն ընդունվել է 2011թ. ապրիլի 21-ին: Հայ-վրացական սահմանի վրա գործող սահմանային անցակետերի կատարելագործումը և արդիականացումը ՀՀ իշխանությունների գերակա առաջնահերթություններից է:






2008թ. ՀՀ Նախագահը դիմել է ԵՄ-ի Արտաքին կապերի գծով հանձնակատարին՝ ԵՄ-ի խորհրդատուների ձևաչափով Հայաստանում իրականացվող բարեփոխումների ծրագրին ԵՄ-ի աջակցությունը ստանալու խնդրանքով: ԵՄ-ը դրականորեն է արձագանքել նշված խնդրանքին՝ Հայաստան ուղարկելով բարձր մակարդակի *ԵՄ-ի խորհրդատվական խումբ* (ԵՄԽԽ):

ԵՄ-ի խորհրդատվական խումբը, հանդես գալով Հայաստանում ԵՄ-ի պատվիրակության ղեկավարության ներքո, աջակցություն է տրամադրել ՀՀ հանգուցային կառույցներին Հայաստանի բարեփոխումների սեփական օրակարգի հետագա նախագծման և իրականացման ուղղությամբ, գլխավորապես, «ԵՄ-Հայաստան» Եվրոպական հարևանության քաղաքականության գործողությունների ծրագրի իրականացման միջոցով: 2008թ. նոյեմբերից մինչև 2010թ. հուլիսի 31-ն ընկած ժամանակաշրջանում հատկացվել է ընդամենը 2.81 միլիոն եվրո:

2010թ. ամռանը մշակված և գոհացնող արդյունքներ արձանագրած Գնահատման հաշվետվությունից հետո որոշվել է շարունակել ԵՄԽԽ-ի գործունեությունը և նախաձեռնել աշխատանքների 3-րդ փուլը՝ հետագա երեք տարիների կտրվածքով ԵՄԽԽ-ի գործունեությանն աջակցելու նպատակով հատկացնելով լրացուցիչ 4.2 միլիոն եվրո:



ՀՀ պետական սահմանների ողջ երկայնքով գործող և ապագայում նախատեսվող սահմանային անցակետերում ֆիզիկական ենթակառուցվածքների տեխնիկական ու ֆինանսական մանրագնին գնահատում կատարելու նպատակով ԵՄԽԽ-ը ստեղծել է Սահմանային գնահատման խումբ (2010թ. ապրիլի 12-ից 24-ը):

Ինչ վերաբերում է հայ-վրացական սահմանի վրա գործող երեք ավտոճանապարհային սահմանային անցակետերին (Բագրատաշեն, Բավրա և Գոգավան), ապա գնահատման հաշվետվությունում առաջարկվում է հետևյալը.

- 1) Սահմանային հսկողության բոլոր մարմինների կողմից տրանսպորտային միջոցների, ուղևորների և առևտրային նշանակության բեռների արագ ու արդյունավետ հսկողությունը դյուրինացնելու նպատակով բարելավել Բավրայի և Բագրատաշենի սահմանային անցակետերի հսկողական կարողությունները և ենթակառուցվածքները,
- 2) Վերականգնել Գոգավանի սահմանային անցակետը՝ դարձնելով այն գլխավորապես ուղևորների և առևտրային նշանակության տեղական բեռնափոխադրումների համար նախատեսված անցակետ:



# Գլուխ 1

## Բավրայի սահմանային անցակետը

Բավրայի սահմանային անցակետը գտնվում է ծովի մակերևույթից 2120 մ բարձրության վրա, Երևանից 177 կմ հեռավորությամբ դեպի Բաթում (Վրաստանի Հանրապետություն) տանող ամենակարճ ճանապարհին ապահովող Մ-1 մայրուղու վրա: Նշված անցակետը ներառված է Հյուսիս-Հարավ ավտոճանապարհային միջանցքում, որի վերակառուցումն իրականացվում է 2009թ. Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև ստորագրված Ներդրում Հյուսիս-Հարավ ավտոմայրուղիի ծրագրի շրջանակում:

Հարավից դեպի հյուսիս Հայաստանի տարածքով ձգվող Ագարակ-Կապան-Երևան-Բավրա ավտոճանապարհը (Մ1 և 2 ավտոճանապարհներ) միանում է Վրաստանի Արևելք-Արևմուտք ավտոմայրուղուն, որը տանում է դեպի Փոթի և Բաթում սևծովյան նավահանգիստներ: Այս ուղին թույլ է տալիս Հայաստանին ամենակարճ ճանապարհով հասնել Եվրոպային, Ռուսաստանի Դաշնությանը և Թուրքիային միացած նավահանգիստներ: Միևնույն ժամանակ, Վրաստանի կառավարությունը բարեկարգում է Արևելք-Արևմուտք ավտոմայրուղին և որպես Թբիլիսիից դեպի սևծովյան նավահանգիստներ տանող այլընտրանքային ուղի նախատեսում է բարեկարգել Բավրա-ժղանով-Ախալցխա-Բաթում ավտոճանապարհը:



Սրա շնորհիվ հայկական բեռները կարող են ավելի կարճ ճանապարհով հեշտորեն փոխադրվել սևծովյան նավահանգիստներ, քանի որ շուրջ 610 կմ երկարությամբ Երևան-Բաթում ավտոճանապարհի երկարությունը կկրճատվի մոտ 190 կմ-ով կան համարյա 1/3-ով: Ենթակառուցվածքների հետ կապված

սահմանափակումներով (այսինքն՝ սահմանափակ բեռնատարողություն ունեցող ուղեկամուրջներով) պայմանավորված՝ Հայաստանի Հանրապետության և մոտակա սեծոյան նավահանգիստ Բաթումի միջև բեռնափոխադրումները ներկայումս իրականացվում են գլխավորապես Բագրատաշեն սահմանային անցակետով, որի պատճառով տեղացի արտահանողների համար դրանք դառնում են տնտեսապես բավականին ծախսատար և, հետևաբար, համարյա ոչ շահեկան:

Ավտոճանապարհային այս խոշոր ծրագրի ավարտից հետո զգալի ծավալով բեռնափոխադրումներ կիրականացվեն Բավրայի անցակետով, որը կապահովի ավելի կարճ և տնտեսապես նպատակահարմար երթուղի:

Կառավարության գերակա խնդիրն է խթանել ազգային տնտեսությունը և ապահովել ավելի կարճ ու արդյունավետ ելք դեպի մոտակա սեծոյան նավահանգիստները:

Հոսքի հատկանիշներ	Ուղղություն	2008թ.	2009թ.	2010թ.	Ընդամենը
Ուղևորներ	Մուտք	199 282	237 004	270 451	706 737
	Ելք	191 728	244 279	271 372	707 379
Բեռներ	Մուտք	50 681	58 213	57 843	166 737
	Ելք	55 042	60 506	58 824	174 372

Բավրայի սահմանային անցակետով բեռնափոխադրումների և ուղևորափոխադրումների ծավալի վիճակագրական տվյալներ (աղբյուրը՝ ՄԱԿ-ի Ձարգացման ծրագիր)

Նախատեսվում է, որ Երևան-Գյումրի-Բավրա ճանապարհահատվածի աշխատանքները կավարտվեն 2016թ.: Սրա շնորհիվ էապես կբարելավվի Իրանի և Վրաստանի միջև տրանսպորտային կապը, իսկ Հայաստանի համար կապահովվի ավելի ապահով և դյուրին ելք դեպի միջազգային շուկաները:

Բավրայի անցակետը աշխատում է շուրջօրյա ռեժիմով շաբաթվա բոլոր օրերին: Ներկայումս այն տեղակայված է փաստացի պետական սահմանից 2 կմ հեռավորության վրա այն պատճառով, որ տվյալ անցակետի կառուցման ժամանակ դեռևս չէր ավարտվել պետական սահմանների նշագրումը:

Անցակետում իրենց աշխատանքներն են իրականացնում սահմանային հսկողության հետևյալ ծառայությունները.

- Սահմանապահ զորքեր,
- Ոստիկանություն (ՕՎԻՐ),
- Մաքսային ծառայություն,
- Բուսա-սանիտարական և անասնաբուժական տեսչություն,
- Առողջապահության տեսչությունը:

Հսկողական ընթացակարգերի իրականացման տեսանկյունից առանձին շենքային տարածքները երկու ուղղություններով տեղակայված են ըստ սահմանահատման ու մաքսային հսկողության սխեմայի: Ինչևէ, անցակետի տարածքում ուղևորների և տրանսպորտային միջոցների ներքին շարժը թափանցիկ չէ, ինչը պայմանավորված է հսկիչ տարբեր կետերի միջև ընկած մեծ հեռավորություններով և համարժեք նշանների բացակայությամբ, որի պատճառով սահմանային ընթացակարգերի իրականացման համար ծախսվում է անհարկիորեն ավելի շատ ժամանակ:



Աղբյուրը՝ ՍԳԽ-ի վերջնական հաշվետվություն, 2009թ.

Մաքսակետում տեղադրված է կշեռք՝ նախատեսված ուղևորների և ուղեբեռների համար, ինչպես նաև մաքսանենգ ապրանքների բացահայտման սարքավորումներ: Ռադիոակտիվ ճառագայթման աղբյուրների բացահայտման սարքերը տեղադրված են անցակետի մուտքի մոտ, և դրանք, ինչպես արգելափակոցային գոտու միջոցով դեպի անցակետի տարածքը տանող մուտքով անցուղարձը, գտնվում են մաքսային ծառայողների հսկողության ներքո:



Անցակետի տարածքում, հատկապես հսկիչ գոտիներում, լուսավորությունը, ինչպես նաև տեսահսկողությունը չեն ընդգրկում անցակետի ողջ տարածքը և իրականում անբավարար են:

Անցակետը միացած է էլեկտրական էներգիայի մատակարարման համակարգին: Թեև կան վթարային գեներատորներ, սակայն դրանցից

յուրաքանչյուրը բավարար է լոկ պարզունակ աշխատանքների կատարման համար էլեկտրականություն ապահովելու համար: Միայն մաքսային ծառայության շենքն է ապահովված ջրամատակարարման համակարգով, մինչդեռ կոյուղաջրերը հավաքվում են բաքերում: Ջրամատակարարման և կոյուղու համակարգերի տեխնիկական վիճակը չի համապատասխանում սանիտարական և բնապահպանական ժամանակակից նորմերին:

Մաքսային ծառայության մասով առանձին ծառայությունների միջև և վերադաս մարմինների հետ իրականացվում է տվյալների առցանց փոխանակում, մինչդեռ Սահմանապահ զորքերը/Ոստիկանությունը (ՕՎԻՐ) ,GPRS/UMTS-ե տվյալների շարժական համակարգերի միջոցով օգտվում են ինտերնետային կապից:

Ուղևորների սահմանային, անձնագրային և մաքսային հսկողության շենքերը գտնվում են տեխնիկապես անբավարար վիճակում և չեն համապատասխանում ՄՍԿ-ի պահանջներին: Անցակետի տարածքում ավտոճանապարհային հատվածը գտնվում է վատթար ֆիզիկական վիճակում, անձնագրային հսկողություն անցնելու համար հերթում կանգնած ավտոմեքենաների, ինչպես նաև դրանց մանրազնին ստուգումների համար ավտոկայանատեղ չկա:

Հսկողության ողջ գոտում չկա ծածկով ապահովված որևէ տարածք, և անձնագրային հսկողություն անցնող ուղևորները պաշտպանված չեն եղանակային վատ պայմաններից, թեև հարկ է նշել, որ անձնագրային հսկողության կետը դրսից պաշտպանված է շատ փոքր ծածկով: Բացի այդ, գոյություն չունեն ուղևորների համար նախատեսված սանհանգույցներ չնայած նրան, որ հատկապես երթևեկության պիկային պահերին մաքսային և ներգաղթային հսկողություն անցնող մարդիկ ստիպված են բավականին երկար սպասել:



Անասնաբուժական/բուսա-սանիտարական հսկողություն և անձնագրային հսկողություն Ձմռան ամիսներին երթևեկության/աշխատանքի դժվարին պայմաններ Բավրայի ՍԱ-ում (աջից) դեպի Վրաստան գնացող ավտոմեքենաների համար

Անցակետը գտնվում է աշխարհագրական մի գոտում, որտեղ ձմռան ամիսներին տեղի են ունենում ձյան առատ տեղումներ և ձնաբքեր: Սրա պատճառով երբեմն ժամանակավորապես դադարեցվում են անցակետի աշխատանքները, իսկ տրանսպորտային միջոցների վարորդներն ու ուղևորները ստիպված են լինում մինչև 3 օր սպասել անցակետի տարածքում:

Նախատեսվում է, որ ԵՄ-ի ֆինանսական աջակցությամբ Բավրայի ՍԱ-ն կդառնա մասնագիտացված սահմանային անցակետ, որը կունենա տրանսպորտային միջոցների մանրազնին ստուգման, այդ թվում բուսա-սանիտարական և անասնաբուժական հսկողության հնարավորություններ, իսկ նշված ծառայությունները կտեղակայվեն նոր շենքում, որը կկառուցվի

սահմանագծին ավելի մոտ տարածքում:

Նախատեսվում է անցակետում կառուցել հսկողության 8 ուղի՝ 4-ը դեպի Հայաստան ժամանող երթևեկության, իսկ 4-ը՝ Հայաստանից դուրս եկող երթևեկության համար (ի լրումն, ամեն ուղղության համար կկառուցվեն 2-ական լրացուցիչ ուղիներ՝ նախատեսված ավտոբուսների և բեռնատարների համար): Հետիոտների համար կկառուցվեն առանձնացված ծածկապատ ուղիներ: Շինարարությունն արդեն սկսվել է, և տեղում կատարվել են որոշակի նախապատրաստական աշխատանքներ: Ակնկալվում է, որ շինարարությունը կավարտվի մինչև 2013 թվականը: Մինևույն ժամանակ, վրացական կողմում Նինոցմինդա սահմանային նոր անցակետի կառուցումն ավարտվել է, և այն լիարժեքորեն գործում է:

Սահմանապահ զորքերի և Ոստիկանության կողմից ներկայումս օգտագործվող ենթակառուցվածքների վիճակը գնալով վատթարանում է ոչ միայն ծառայողների աշխատանքային պայմանների (օր.՝ չափազանց բարձր կամ ցածր ջերմաստիճանային պայմաններում ջերմամեկուսացման/օդափոխության բացակայության), այլ նաև եղանակային դաժան պայմաններից ուղևորներին պաշտպանելու և մարդասիրաբար նրանց հսկողության ենթարկելու անհնարինության առումով, քանի որ բացակայում են համապատասխան ծածկերը/ապաստանները: Գիշտ է, նախատեսվում է մինչև 2013թ. ավարտել օպտիմալ ենթակառուցվածքներով օժտված նոր անցակետի կառուցումը, սակայն առկա իրավիճակը բարելավելու հնարավորությունը կարող է էական ազդեցություն ունենալ սահմանային հսկողության ծառայողների շահադրվածության բարձրացման վրա, ինչպես նաև ապահովել ավելի բարվոք պայմաններ (այսինքն՝ սանհագույցներ, անձրևից և/կամ ձնից պաշտպանող ծածկեր) սահմանը հատող ուղևորների համար:

Ճամփորդական փաստաթղթերի ստուգման նպատակով տեղադրված ՏՏ սարքավորումները և սարքերը հնացած են կամ լիովին սարքին վիճակում չեն և թույլ չեն տալիս կիրառել փաստաթղթերի առաջնային և երկրորդային հսկողության սկզբունքը: Թեև սահմանապահներն անցել են կեղծված փաստաթղթերի բացահայտման թեմայով ուսուցում, սակայն սարքավորումները չեն ապահովում այն բոլոր գործառնությունները, որոնք այսօր անհրաժեշտ են ճամփորդական փաստաթղթերի նկատմամբ կիրառվող անվտանգության հատկանիշների, այդ թվում կենսաչափական անձնագրերի ստուգման, ինչպես նաև երկրորդային զննությունների ժամանակ առավել մանրազնին հսկողություն իրականացնելու համար:

Թեև ճամփորդական փաստաթղթի կեղծված լինելու կամ չլինելու մասին վերջնական որոշումը կայացնում է հրամանատարը/հերթափոխի պետը, սակայն տեղերում բացակայում են հատուկ սարքեր, որոնք թույլ են տալիս առավել մանրազնին կամ լիարժեքորեն զննության ենթարկել փաստաթուղթը: Ավելին, չկա գրասենյակային այնպիսի տարածք, որտեղ կարող է անցկացվել ենթադրաբար կեղծված ճամփորդական փաստաթուղթ ունեցող կամ ակնհայտորեն իրավախախտ հանդիսացող մարդկանց հարցաքննությունը:

## **Հնարավոր միջամտության վերաբերյալ առաջարկություններ.**

### **1. Ենթակառուցվածքներ.**

Առաջարկություն 1-ին. Հնարավորինս կատարելագործել Բավրայի սահմանային անցակետի ենթակառուցվածքները, օր.՝ ծառայողների համար տեղադրել համարժեք ջերմամեկուսացում/ջեռուցում և օդափոխություն ունեցող պատրաստի գրասենյակային կոնտեյներներ, ինչպես նաև ներգաղթային ստուգման կետերի
--

առջև ուղևորների համար ապահովել ծածկով պաշտպանված սպասման գոտիներ:

Բավրայի նոր սահմանային անցակետի շինարարության ավարտից հետո կոնտեյներները կարելի է հեշտորեն տեղափոխել անբավարար ենթակառուցվածքներ ունեցող ցանկացած այլ սահմանային անցակետ:

Առաջարկություն 2-րդ.  
Տեղադրել առնվազն նվազագույն հարմարություններ ունեցող սանիտարական ենթակառուցվածքներ, մասնավորապես՝ սանհագույցներ և մաքուր ջրի մատակարարում 24-ժամյա հերթափոխով աշխատող ծառայողների համար, ինչպես նաև առանձին սանհանգույցներ հերթում սպասող ուղևորների համար:

Առաջարկություն 3-րդ.  
Հզորացնել շրջագծային պաշտպանվածությունը, այսինքն՝ ցանկապատել անցակետի ողջ տարածքը, բարելավել լուսավորությունը (լուսարձակներ) և տեսահսկողությունը, որը, ելնելով անվտանգության ամրապնդման նկատառումից, պետք է ներառի անցակետի հսկողական բոլոր գոտիները:

**2. Սարքավորումներ**

Առաջարկություն 1-ին.  
Տեղադրել անձնագրերի վերլուծության, այսինքն՝ անձնագրեր կարդացող լրացուցիչ սարքեր, որոնք կարող են վերծանել ,RFID-են (ռադիոհաճախականությամբ նույնականացման) միկրոպրոցեսորները, ինչպես նաև փաստաթղթերի առաջնային ու երկրորդային հսկողության նպատակներով տեղադրել փաստաթղթերի ստուգման սարքեր:

Առաջարկություն 2-րդ.  
Ներքին հաշվետվությունների և գործերի կառավարման կատարելագործման նպատակով տրամադրել գրասենյակային լրացուցիչ սարքավորումներ, մասնավորապես՝ համակարգիչներ/նոութբուքեր և բազմաֆունկցիոնալ տպիչ/սկանավորող/պատճենահանող սարքեր:

Առաջարկություն 3-րդ.  
Ձեռքի, թմրանյութերի, մաքսամենզ և/կամ ներկրման/արտահանման արգելանքին կամ սահմանափակումներին ենթակա ապրանքների բացահայտման նպատակով մասնավոր ավտոմեքենաներում/ավտոբուսներում մանրազնիմ խուզարկություններ կատարելու նպատակով տրամադրել որոնման հիմնական սարքավորումներ: Առաջարկվում է նաև տրամադրել թմրանյութերի նույնականացման համար նախատեսված լրացուցիչ սարքավորումներ:

**3. Ուսուցում**

Առաջարկություն 1-ին.  
Առաջարկվում է անցկացնել Բավրայի սահմանային անցակետում

աշխատող սահմանապահների/ոստիկանության ծառայողների ուսուցում, հատկապես փաստաթղթերի կեղծման, թրաֆիքինգի զոհերի, մարդկանց ապօրինի սահմանահատումների, մաքսանենգ ճանապարհով թմրանյութերի տեղափոխման դեպքերի բացահայտման, ապրանքների ներկրման/արտահանման արգելման և սահմանափակման թեմաներով ուսուցում. Բավրան ընդգրկված/ներառված չէ ԵՄԽԽ-ի նախագծի շրջանակում կարողությունների զարգացման ուղղությամբ իրականացվող աշխատանքներում կամ ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի կողմից իրականացվող, SCIBM-ն նախագծի աշխատանքներում:



## Գլուխ 2

### Ջվարթնոց միջազգային օդանավակայան

#### Գնահատման շրջանակը



Միջազգային օդանավակայանը գտնվում է Ջվարթնոցի մոտ, Հայաստանի մայրաքաղաք Երևանից դեպի արևմուտք 12կմ հեռավորության վրա: Օդանավակայանը կառուցվել է 1961 թվականին: Այսօր այն հանդիսանում է օդային երթևեկության ամենամեծ ծավալներ ունեցող օդանավակայանը Հայաստանում և Կովկասում: Օդանավակայանը հիմնանորոգվել է 1980-ականներին, և այդ շրջանում էլ Խորհրդային Միության այլ քաղաքների հետ օդային կապի ներքին պահանջարկը բավարարելու նպատակով կառուցվել է նոր տերմինալը:

1990-ականներին, անկախության հռչակումից հետո բեռնափոխադրումների զգալի աճի արդյունքում 1998թ. կառուցվել է նոր բեռնային տերմինալը, որը հագեցված է տարեկան շուրջ 100,000 տոննա բեռներ ընդունելու ու բաց թողնելու հնարավորություն ունեցող ժամանակակից տեխնիկական սարքավորումներով:

2001թ. կնքվել է օդանավակայանի գործունեության կառավարման 30 տարվա պայմանագիր Հայաստան միջազգային օդանավակայաններ ՓԲԸ-ի հետ, որը վերահսկվում է արգենտինահայ գործարար Էդուարդո Էռնեսկյանին պատկանող «Corporation America» արգենտինյան ընկերության կողմից:

Վերը պայմանագրի շրջանակում Հայաստան միջազգային օդանավակայաններ ՓԲԸ-ը հանձնռել է վերակառուցել և ընդլայնել օդանավակայանը՝ նպատակ ունենալով դարձնել այն Ասիայի և Եվրոպայի միջև զբոսաշրջության ու առևտրի կենսական հանգույց, ինչպես նաև արդիականացնել օդանավակայանի շենքային տարածքներն ու ծառայությունները:





Նշված հանձնառությունների շրջանակում 2004թ. սկսվել են օդանավակայանի վերանորոգման և ընդլայնման աշխատանքները, որոնց արդյունքում 2007թ. հունիսի 1-ին բացվել է նոր միջազգային տերմինալը: Ներկայումս ընթացքում է գտնվում մեկ այլ տերմինալի շինարարությունը, որտեղ տեղակայված կլինեն ուղևորների գրանցման և մաքսային հսկողության կետերը: Նախատեսվում է նոր տերմինալը շահագործման հանձնել 2011թ. հոկտեմբերին:



Օդանավակայանի հին տերմինալի շենքի շահագործվող տարածքները չեն համապատասխանում պահանջվող ստանդարտներին, մինչդեռ դրանք շատ լավն են նոր տերմինալներում: Հին տերմինալը, որը գլխավորապես օգտագործվում է ուղևորների գրանցման համար, կառուցված է կորած, սակայն համեմատաբար նեղ միջանցքի տեսքով: Միևնույն տարածքում են տեղակայված նաև մի շարք մասնավոր ձեռնարկություններ: Նման պայմաններում թաքցված պայթուցիկ կամ այլ նյութեր պարունակող ցանկացած ուղեբեռ կարելի է հեշտորեն աննկատ պահ տալ և վնաս հասցնել մեծաքանակ թվով մարդկանց:

Կարելի է ասել, որ հանրության համար հասանելի տարածքը տեսահսկվում է, սակայն, ամենայն հավանականությամբ, նման տեսահսկողությունը չի կարող ընդգրկել բոլոր խոցելի տարածքները, հատկապես հին տերմինալի շենքի ներսում (որտեղ իրականացվում է ուղևորների գրանցումը):

Ժամանող և մեկնող ուղևորների ներգաղթային ստուգումները հիմնվում են միասնական հերթի կառավարման համակարգի վրա՝ թույլ տալով յուրաքանչյուր առանձին ուղևորին ազդանշանից հետո մոտենալ ազատ պատուհանին: Սպասարկվող պատուհանների և հսկողություն իրականացնող ծառայողների թիվը կարելի է շատ հեշտորեն փոփոխել՝ ելնելով հերթում սպասող ուղևորների թվից: Միևնույն ժամանակ, նշված ծառայողները համարյա չունեն հնարավորություն հետևելու առանձին ուղևորների տարօրինակ/կասկածելի վարքագծին նախքան այն պահը, երբ նրանք կմոտենան ներգաղթային հսկողության պատուհանին:

Նախքան ներգաղթային հսկողության պատուհանին մոտենալը մեկնող ուղևորի ինքնության և ներկայացվող ուղևորային կտրոնում նշվող անվան միջև համապատասխանությունը ստուգելու, ինչպես նաև տվյալ անձի

ինքնությունը նախքան ինքնաթիռ նստելը ևս մեկ անգամ ճշտելու նպատակով օդանավակայանի անվտանգության ծառայողները տեղում կատարում են մեկնող ուղևորի մատնահետքերի ստուգում (աջ և ձախ ձեռքի ցուցամատեր): Սույն գնահատման կատարման պահի դրությամբ հնարավոր չէրավ ստանալ հաստատ պատասխան այն մասին, թե արդյոք նման տեղեկատվությունը հասանելի է նաև ներգաղթային հսկողության ծառայողին, որը դրանից հետո պարտավոր է ստուգել երկրից մեկնող ուղևորի անձնագիրը և ինքնությունը: Միևնույն ժամանակ գնահատման խմբին հայտնել են, որ դեռևս օգտագործվում են անձնագրերի վերլուծության որոշ տեսակի սարքեր, որոնք սխալ են աշխատում, չնայած նրան, որ դրանց կիրառության պատճառով ի հայտ են գալիս լուրջ խնդիրներ ու դժվարություններ՝ կապված անձնական տվյալների ճիշտ հաշվառման հետ: Ավելին, առաջանում են էական անհամապատասխանություններ օդանավակայանի Սահմանային կառավարման տեղեկատվական համակարգի և «Ուղևորների ցանկ» տեղեկատվական բազայի տվյալների միջև:

Նախատեսվում է, որ նոր օդանավակայանը լիովին կհամապատասխանի Օդային տրանսպորտի միջազգային ընկերակցության («IATA») Բ դասի օդանավակայանների ստանդարտներին («IATA»-ն գնահատում է օդանավակայանները ըստ Ա, Բ, Գ, Դ դասերի), որի շնորհիվ կկրկնապատկվի գործող օդանավակայանի հզորությունը: **Սույն գնահատման կատարման պահի դրությամբ հնարավոր չէր ճշտել, թե արդյոք այս տեղեկատվությունը հասանելի է նաև ներգաղթային հսկողության ծառայողին, որը դրանից հետո պարտավոր է ստուգել երկրից մեկնող ուղևորի անձնագիրը և ինքնությունը:**

Նախատեսվում է, որ նոր համալիրում կգործի ուղևորների գրանցման 46 կետ՝ ներկայիս 24-ի համեմատ: Անշուշտ, սա կօգնի խուսափել հերթերի գոյացումից և մեծաքանակ մարդկանց կուտակումներից: Նոր համալիրը կունենա մեկնման և ժամանման ընդարձակ սրահներ, 25,000 քառ. մ տարածքում կառուցված երկհարկանի ավտոկայանատեղ՝ նախատեսված 600 ավտոմեքենայի համար: Այս թիվը երեք անգամ գերազանցում է գործող ավտոկայանատեղի տարողունակությունը: Ներկայիս 1.6 միլիոն ուղևորի համեմատ նոր տերմինալը տարեկան կսպասարկի մինչև 3 միլիոն ուղևոր:

Վերջին չորս տարիներին ուղևորափոխադրումների ծավալը տարեկան աճել է 8-12 տոկոսով: Բացի այդ, ապագայում նոր օդավանակայանը կունենա ներկայիս 5-ի փոխարեն ժամում մինչև 10 օդանավ ընդունելու հնարավորություն:

Հնարավոր միջամտությունների վերաբերյալ առաջարկություններ.

**1. Ենթակառուցվածքներ.**

- Առաջարկություն 1-ին.  
Լրացուցիչ գրասենյակային տարածք փաստաթղթերի երկրորդային գծի ստուգումների համար, ինչպես նաև սպասման տարածք և առանձին սենյակ հնարավոր անբարեխիղճ ուղևորների, անկանոն միգրանտների կամ թրաֆիքինգի զոհերի հարցաքննության համար:
- Առաջարկություն 2-րդ.  
Կասկածելի ուղեբեռները կամ մոռացված իրերը բացահայտելու նպատակով բարելավել տեսահսկողությունը այն բոլոր տարածքներում, որոնք հասանելի են հանրության համար (հատկապես ուղևորների գրանցման գոտում):
- Առաջարկություն 3-րդ.

Վերանայել ժամանող և մեկնող ուղևորների ներգաղթային հսկողության մեջ ներկայումս կիրառվող հերթերի կառավարման համակարգը, որը թույլ չի տալիս ներգաղթային հսկողության ծառայողին նախքան հսկիչ պատուհանին ուղևորի մոտենալը հետևել նրա կասկածելի վարքագծին, օր.՝ նյարդային վիճակին, այլ մարդկանց հետ շփմանը (թրաֆիքինգ իրականացնող - զոհ, ապօրինի սահմանափակում իրականացնող - անկանոն միգրանտ) և այլն:

## 2. Սարքավորումներ

Առաջարկություն 1-ին.  
Չնարավորինս վաղ փուլում նորերով փոխարինել անձնագրերի ավտոմատ վերլուծության սխալ աշխատող մեքենաները և արդիականացնել անձնագրերի վերլուծության նպատակով կիրառվող սարքերը, հատկապես ,RFID-ե միկրոպրոցեսորների վերծանման, ինչպես նաև ուղևորներից կենսաչափական տվյալներ (այսինքն՝ մատնահետքեր) արձանագրելու հնարավորության տեսանկյունից:

Առաջարկություն 2-րդ.  
Փաստաթղթերի ստուգման սարքեր երկրորդային գծի հսկողության նպատակներով:

## 3. Ուսուցում

Առաջարկություն 1-ին.  
Առաջարկվում է ցանկացած խորագրված դասընթաց հետևյալ թեմաներով, որը կհիմնվի «ուսուցել ուսուցողներին» մոտեցման վրա.

- Կեղծված փաստաթղթերի բացահայտում,
- Ռիսկերի նկարագրերի կազմում/ռիսկերի կառավարում,
- Անդրազգային հանցավորություն,
- Երկրորդային գծի հսկողության ընթացակարգեր,
- Հարցաքննման եղանակներ,
- Մարդկանց թրաֆիքինգ և թրաֆիքինգի զոհերի բացահայտում:

## Գլուխ 3

### Երկկողմ հանդիպումներ սահմանային հսկողության համար պատասխանատու այլ մարմինների հետ, ինչպես նաև այց Սահմանապահ զորքերի գլխամասային նոր շենք և ուսումնական կենտրոն

Գնահատման խումբը հնարավորություն ունեցավ այցելել Սահմանապահ զորքերի գլխամասային նոր շենքը և Ուսումնական կենտրոնը (4-9 կենտրոն), որոնք գտնվում է Երևանի Դավիթաշեն թաղամասում, ինչպես նաև երկկողմ հանդիպումներ ունենալ հետևյալ կառույցների հետ.

- Ազգային անվտանգության ծառայության Միջազգային կապերի վարչություն
- Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն
- Գյուղատնտեսության նախարարության Սննդի անվտանգության և անասնաբուժության պետական տեսչություն
- Էկոնոմիկայի նախարարության Էլ-կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ, ԲԲԸ («EKENG»)
- ՍԿԻՄԵ ծրագրի ղեկավար (ՄԱԿ-ի զարգացման ծրագիր)
- Առողջապահության նախարարության Իրավաբանական վարչություն, և
- ԻՆՏԵՐՊՈԼ Հայաստան ԱԿԲ:

Վերոնշյալ պետական մարմինների և սահմանային կառավարման հարցերով ակտիվորեն զբաղվող միջազգային կազմակերպությունների հետ կայացած երկկողմ հանդիպումների արդյունքում պարզ դարձավ, որ ստորակարգության բոլոր մակարդակներում, ընդհանուր առմամբ, արդյունավետ համագործակցություն է իրականացվում Սահմանապահ զորքերի և վերջիններիս ստորաբաժանումների միջև: Սահմանապահ զորքերի նոր գլխամասային շենք կատարած այցը ցույց տվեց, որ միջազգային աջակցության ծրագրերի միջոցով հնարավոր է իրականացնել որոշ միջամտություններ և տրամադրել աջակցություն:

Սահմանապահ զորքերի գլխամասային նոր շենքը կառուցվել է Երևանի արվարձաններից մեկում: Այն ապահովված է շատ լավ ենթակառուցվածքներով և հարմարություններով Սահմանապահ զորքերի տարբեր ստորաբաժանումների, հատկապես ծառայողական շների բուժման և վարժեցման կենտրոնի, ինչպես նաև սահմանային կառավարման առնչվող թեմաներով ներքին դասընթացների վարման համար նախատեսված Ուսումնական կենտրոնի համար: Չնայած դասընթացների (ներածական դասընթացներ նոր ծառայողների համար և պարբերաբար անցկացվող դասընթացներ միջին օղակի ծառայողների ու մասնագետների համար) կազմակերպման ու անցկացման պայմանների բարելավմանը, Ուսումնական կենտրոնը դեռևս չունի համապատասխան ուսումնական ծրագիր, որը թույլ կտար ավելի լավ պլանավորել մարդկային ռեսուրսների կառավարումը և ստեղծել ուսուցել ուսուցողներին սկզբունքով գործող կայուն համակարգ:

Ուսուցման բարելավված հարմարությունների և ինքնուրույնաբար գործող վերապատրաստման համակարգի ստեղծումը արտացոլված է նաև վերջերս հաստատված Հայաստանի Հանրապետության սահմանային անվտանգության և միասնական սահմանային կառավարման ռազմավարությունում, որի գլխավոր նպատակները ըստ հետևյալ ուղղությունների ներառում են.

#### 3.2. Ռազմավարության հիմնական նպատակները

(4) Մարդկային ռեսուրսների կառավարում, ինստիտուցիոնալ, մեթոդական ու տեխնիկական կարողությունների զարգացում և մասնագիտական հմտությունների բարելավում պետական սահմանների անվտանգության և միասնական սահմանային կառավարման մարմինների ներսում:

**6.8. Անձնակազմի ուսուցումը և վերապատրաստումը**

Սահմանային անվտանգության համար պատասխանատու մարմինների անձնակազմի կրթումը, վերապատրաստումը և հերթագայությունը կառավարման հանգուցային գործիքներ են, որոնք պետք է ապահովվեն՝ ելնելով բոլոր համապատասխան մարմինների լավագույն շահերից, միաժամանակ բարձրացնելով մարմինների միջև կապերի ու գործնական համագործակցության եղանակների մասին իրազեկության մակարդակը: Կրթական (վերապատրաստման) ծրագրերը պետք է ընդգրկեն բոլոր աշխատակիցներին և ապահովեն նրանց աշխատանքին զուգահեռ ընթացող ուսումնական գործընթացի շարունակականությունը՝ անհրաժեշտության դեպքում աշխատակիցների կրթման նպատակով հրավիրելով մասնագետներ այլ կառույցներից:

Ավելին, Հայաստանի Հանրապետության սահմանային անվտանգության և միասնական սահմանային կառավարման ռազմավարության (2011-2015թթ.) իրականացման գործողությունների ծրագրի և ժամանակացույցի նախագծում, ի թիվս այլոց, ընդգծվում է հետևյալի կարևորությունը.

.....մշակել և ներդնել սահմանային, մաքսային, անասնաբուժական, բուսա-սանիտարական և սանիտարա-կարանտինային հսկողության վերաբերյալ մեթոդական ձեռնարկներ և լսա- և տեսա-ուսումնական նյութեր,

....մշակել և ընդունել Միջազգային առողջապահական կանոնների վերաբերյալ ուսումնական նյութեր և մեթոդական ձեռնարկներ՝ նախատեսված սահմանային անցակետերում և սանիտարա-կարանտինային գործառույթում ներգրավված մարմինների աշխատակիցների համար,

.....անցկացնել օտար լեզվի և համակարգչի իմացության պարբերական դասընթացներ, ինչպես նաև ներկայումս կիրառվող տեխնոլոգիական համակարգերի վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ (ներառյալ անհատական ուսուցումը), ինչպես նաև ներածական դասընթացներ սահմանային անցակետերի սկսնակ աշխատողների համար,

....կազմակերպել սահմանային կառավարման աշխատանքների առանձնահատկություններին նվիրված հատուկ ուսուցում՝ նախատեսված Պետական եկամուտների կոմիտեի, Ոստիկանության և Ազգային անվտանգության ծառայության այն ծառայողների համար, ովքեր իրավասու են իրականացնել հետաքննչական և օպերատիվ աշխատանքներ, կամ

.....մշակել համատեղ ուսումնական ծրագրեր (ինչպես նաև առանձին ուսումնական ծրագրեր յուրաքանչյուր գերատեսչության համար)՝ նախատեսված սահմանային

*անցակետերում աշխատող սահմանային հսկողության մարմինների ծառայողների համար, որոնք կներառեն ՄՍԿ-ի սկզբունքներին, դրանց վրա հիմնվող աշխատանքներին, միասնական պատուհանի և միասնական սպասարկման հասկացություններին վերաբերող թեմաները:*

Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության ծրագրի աջակցությամբ ՄՍԿ-ը արդեն մշակել է մի քանի ուսուցողական մոդուլներ և ծրագրեր մարդկանց թրաֆիքինգի, սահմանային կառավարման, միգրացիայի մասին միջազգային իրավական դաշտի և այլնի վերաբերյալ, որոնք կարող են խթանել վերապատրաստման ներքին կայուն համակարգի ստեղծման ուղղությամբ ՀՀ Սահմանապահ զորքերի գործադրած ջանքերը: Ներկայումս լույս ժամանակ առ ժամանակ կազմակերպվող վերապատրաստման դասընթացները չեն բավարարում պարբերաբար (տարեկան) կազմակերպվող վերապատրաստման ծրագիր ունենալու փաստացի, ինչպես նաև կանխատեսելի կարիքը, որը եզակի կարևորություն կունենա ՀՀ Սահմանապահ զորքերի ծառայողների պրոֆեսիոնալիզմի մակարդակի հետագա բարձրացման համար, ինչն անհրաժեշտ է սահմանային անվտանգության համար պատասխանատու մարմինների անձնակազմի վերապատրաստման բարելավման, հմտությունների զարգացման և ծառայողների հերթագայության պահանջների բավարարման համար:

Մի կողմից, հատկապես տեսական պարապմունքների համար նախատեսված ուսումնական լրացուցիչ սենյակներ կահավորելու, դրանք բազմաֆունկցիոնալ սարքավորումներով համալրելու և ուսումնական նյութերի, ձեռնարկների, իրավական փաստաթղթերի և հրահանգների բազմացման համար ծառայողական փոքրամասշտաբ տպարան ստեղծելու (այսինքն՝ բարձր հզորության լազերային պատճենահանող սարք և նյութերի կարման հարմարություններ, ինչպես նաև նյութեր տրամադրելու) միջոցով ուսումնական կենտրոնին նպատակային տեխնիկական և ենթակառուցվածքային աջակցության տրամադրումը, և մյուս կողմից, ուսումնական կենտրոնի համար մշտական դասավանդող կազմ նշանակելու հարցում Սահմանապահ զորքերի ղեկավարության հստակ հանձնառությունը հնարավորություն կտան ջանքերն ուղղել մարդկային ռեսուրսների վերաբերյալ վերապատրաստման տարեկան ծրագրի ներդրմանը, որը կբավարարի հայ-վրացական սահմանի վրա շուտով արդիականացվելիք և էապես ավելի մեծ սահմանային անցակետերի համար լրացուցիչ թվով սահմանապահների վերապատրաստման ապագա պահանջարկը, որը ի հայտ կգա համարժեք վերապատրաստում անցած շատ ավելի մեծ թվով սահմանապահ ծառայողների անհրաժեշտության, ինչպես նաև հայ-թուրքական սահմանի հնարավոր բացման համատեքստում:

## 1. Ենթակառուցվածքներ.

Առաջարկություն 1-ին.

Կահավորել տեսական պարապմունքների համար նախատեսված լրացուցիչ ուսումնական սենյակներ, այդ թվում մասնագիտացված դասասենյակ Սահմանային կառավարման տեղեկատվական համակարգի (Սահմանային սինուլյատորի) շահագործման, ինչպես նաև անձը հաստատող փաստաթղթերի ստուգումներ կատարելու համար:

Առաջարկություն 2-րդ.

Ստեղծել ծառայողական փոքրամասշտաբ տպարան՝ նախատեսված ուսումնական նյութերի, ձեռնարկների, իրավական փաստաթղթերի և հրահանգների բազմացման համար:

## 2. Սարքավորումներ

Առաջարկություն 1-ին.

Ուսումնական փոխգործուն մոդուլների համար տրամադրել բազմաֆունկցիոնալ ուսումնական սարքավորումներ (թվային լուսանկարչական ապարատ, տեսախցիկ, սպիտակ էկրաններ և այլն):

Առաջարկություն 2-րդ.

Ծառայողական տպագրական արհեստանոցը համալրել աշխատանքային բարձր հզորություն ունեցող լազերային պատճենահանող սարքով, կարման սարքերով, ինչպես նաև տպագրական/կարման նյութերով, ինչը թույլ կտա սահմանապահներին տպել բավարար քանակությամբ ուսուցողական և օժանդակ նյութեր ուսումնական կենտրոնում վերապատրաստվող բոլոր ծառայողների համար:

Առաջարկություն 3-րդ.

Փաստաթղթերի կեղծման թեմայով ուսուցման համար տրամադրել փաստաթղթերի առաջնային և երկրորդային ստուգման սարքեր:

## 3. Ուսուցում

Առաջարկություն 1-ին.

Մշակել և ,ուսուցել ուսուցողներին՝ վերապատրաստման մոդուլների կիրառման միջոցով ինստիտուցիոնալ հիմքերի վրա դնել հետևյալ թեմաներով խորագրված մասնագիտացված դասընթացների անցկացումը.

- Ժամանակակից (միասնական) սահմանային կառավարման հասկացություններ
- Կեղծված փաստաթղթերի բացահայտում,
- Ռիսկերի նկարագրերի կազմում/ռիսկերի կառավարում,
- Փաստաթղթերի երկրորդ գծի հսկողության ընթացակարգեր,
- Հարցաքննման եղանակներ,
- Մարդկանց թրաֆիքինգ և թրաֆիքինգի զրհերի բացահայտում,
- Միգրացիա և առողջություն,
- Անդրազգային հանցավորություն և ահաբեկչություն
- Այլ:

# Գլուխ 4

## Առաջարկությունների ամփոփ ցանկ

Գնահատման սույն հաշվետվությունում առաջարկությունները ներկայացվում են ըստ հետևյալ խմբերի.

- Ա. Ենթակառուցվածքներ
- Բ. Սարքավորումներ
- Գ. Ուսուցում

### Ա. Ենթակառուցվածքներ

Թեև հայ-վրացական սահմանի ենթակառուցվածքները ներկայումս արդիականացվում են, սակայն Բավրայի անցակետում և Ջվարթնոց միջազգային օդանավակայանում սահմանային հսկողության որակը, արդյունավետությունը և էֆեկտիվությունը բարձրացնելու նպատակով դեռևս անհրաժեշտ է ապահովել առավել բարվոք պայմաններ սահմանային ծառայողների և հատկապես Բավրայի սահմանային անցակետը հատող մարդկանց համար՝ կատարելով ենթակառուցվածքների բավականին ոչ թանկ բարելավումներ, ինչպես նաև տեխնիկական սարքավորումների էապես անհրաժեշտ արդիականացումներ նշված անցակետերում:

#### Բավրայի սահմանային անցակետ

##### Առաջարկություն 1-ին.

Չնարավորինս կատարելագործել Բավրայի սահմանային անցակետի ենթակառուցվածքները, օր.՝ ծառայողների համար տեղադրել համարժեք ջերմամեկուսացում/ջեռուցում և օդափոխություն ունեցող պատրաստի գրասենյակային կոնտեյներներ, ինչպես նաև ներգաղթային հսկողության կետերի առջև ուղևորների համար ապահովել ծածկով պաշտպանված սպասման գոտիներ:

Բավրայի նոր սահմանային անցակետի շինարարության ավարտից հետո կոնտեյներները կարելի է հեշտորեն տեղափոխել անբավարար ենթակառուցվածքներ ունեցող ցանկացած այլ սահմանային անցակետ:

##### Առաջարկություն 2-րդ.

Տեղադրել առնվազն նվազագույն հարմարություններ ունեցող սանիտարական ենթակառուցվածքներ, մասնավորապես՝ սանհագույցներ և մաքուր ջրի մատակարարում 24-ժամյա հերթափոխով աշխատող ծառայողների համար, ինչպես նաև առանձին սանհանգույցներ՝ հերթում սպասող ուղևորների համար:

##### Առաջարկություն 3-րդ.

Չզորացնել շրջագծային պաշտպանվածությունը, այսինքն՝ ցանկապատել անցակետի ողջ տարածքը, բարելավել լուսավորությունը (լուսարձակներ) և տեսահսկողությունը, որը, ելնելով անվտանգության ամրապնդման նկատառումից, պետք է ներառի անցակետի հսկողական բոլոր գոտիները:

### Ջվարթնոց միջազգային օդանավակայան



Առաջարկություն 1-ին.

Լրացուցիչ գրասենյակային տարածք փաստաթղթերի երկրորդային գծի ստուգումների համար, ինչպես նաև սպասման տարածք և առանձին սենյակ հնարավոր անբարեխիղճ ուղևորների, անկանոն միգրանտների կամ թրաֆիքինգի զոհերի հարցաքննության համար:

Առաջարկություն 2-րդ.

Կասկածելի ուղեբեռները կամ մոռացված իրերը բացահայտելու նպատակով բարելավել տեսահսկողությունը այն բոլոր տարածքներում, որոնք հասանելի են հանրության համար (հատկապես ուղևորների գրանցման գոտում):

Առաջարկություն 3-րդ.

Վերանայել ժամանող և մեկնող ուղևորների ներգաղթային հսկողության մեջ ներկայումս կիրառվող հերթերի կառավարման համակարգը, որը թույլ չի տալիս ներգաղթի հսկողության ծառայողին նախքան հսկիչ պատուհանին ուղևորի մոտենալը հետևել նրա կասկածելի վարքագծին, օր.՝ նյարդային վիճակին, այլ մարդկանց հետ շփմանը (թրաֆիքինգ իրականացնող - զոհ, ապօրինի սահմանափակում իրականացնող - անկանոն միգրանտ) և այլն:

**Ուսումնական կենտրոն**

Առաջարկություն 1:

Կահավորել տեսական պարապմունքների համար նախատեսված ուսումնական լրացուցիչ սենյակներ, այդ թվում մասնագիտացված դասասենյակ Սահմանային կառավարման տեղեկատվական համակարգի (Սահմանային սինուլյատորի) շահագործման, ինչպես նաև անձը հաստատող փաստաթղթերի ստուգումներ կատարելու համար:

Առաջարկություն 2:

Ստեղծել ծառայողական փոքրամասշտաբ տպարան՝ նախատեսված ուսումնական նյութերի, ձեռնարկների, իրավական փաստաթղթերի և հրահանգների բազմացման համար:

**Բ. Սարքավորումներ**

**Բավրայի ՍԱ**

Առաջարկություն 1-ին.

Տեղադրել անձնագրերի վերլուծության, այսինքն՝ անձնագրեր կարդացող լրացուցիչ սարքեր, որոնք կարող են վերծանել ,RFID-ե (ռադիոհաճախականությանը նույնականացման) միկրոպրոցեսորները, ինչպես նաև փաստաթղթերի առաջնային ու երկրորդային հսկողության նպատակներով տեղադրել փաստաթղթերի ստուգման սարքեր:

Առաջարկություն 2-րդ.

Ներքին հաշվետվությունների և գործերի կառավարման կատարելագործման նպատակով տրամադրել գրասենյակային լրացուցիչ սարքավորումներ, մասնավորապես՝ համակարգիչներ/նոութբուքեր և բազմաֆունկցիոնալ տպիչ/սկանավորող/պատճենահանող սարքեր:

Առաջարկություն 3-րդ.

Ձեռքի, թմրանյութերի, մաքսանենգ և/կամ ներկրման/արտահանման արգելանքին կամ սահմանափակումներին ենթակա ապրանքների բացահայտման նպատակով մասնավոր

ավտոմեքենաներում/ավտոբուսներում մանրագնին խուզարկություններ կատարելու նպատակով տրամադրել որոնման հիմնական սարքավորումներ: Առաջարկվում է նաև տրամադրել թմրանյութերի նույնականացման համար նախատեսված լրացուցիչ սարքավորումներ:

## **Ձվարթնոց միջազգային օդանավակայան**

### Առաջարկություն 1-ին.

Հնարավորինս վաղ փուլում նորերով փոխարինել անձնագրերի ավտոմատ վերլուծության սխալ աշխատող մեքենաները և արդիականացնել անձնագրերի վերլուծության նպատակով կիրառվող սարքերը, հատկապես ,RFID-ե միկրոպրոցեսորների վերծանման, ինչպես նաև ուղևորներից կենսաչափական տվյալներ (այսինքն՝ մատնահետքեր) արձանագրելու հնարավորության տեսանկյունից:

### Առաջարկություն 2-րդ.

Փաստաթղթերի ստուգման սարքեր երկրորդ գծի հսկողության նպատակներով:

## **Ուսումնական կենտրոն**

### Առաջարկություն 1-ին.

Ուսումնական փոխգործուն մոդուլների համար տրամադրել բազմաֆունկցիոնալ ուսումնական սարքավորումներ (թվային լուսանկարչական ապարատ, տեսախցիկ, սպիտակ էկրաններ և այլն):

### Առաջարկություն 2-րդ.

Ծառայողական տպագրական արհեստանոցը համալրել աշխատանքային բարձր հզորություն ունեցող լազերային պատճենահանող սարքով, կարման սարքերով, ինչպես նաև տպագրական/կարման նյութերով, ինչը թույլ կտա սահմանապահներին տպել բավարար քանակությամբ ուսուցողական և օժանդակ նյութեր ուսումնական կենտրոնում վերապատրաստվող բոլոր ծառայողների համար:

### Առաջարկություն 3-րդ.

Փաստաթղթերի կեղծման դեպքերի բացահայտմանը նվիրված ուսուցման համար տրամադրել փաստաթղթերի առաջնային և երկրորդային ստուգման սարքեր:

## **Գ. Ուսուցում**

### **Բավրայի սահմանային անցակետ**

#### Առաջարկություն 1-ին.

Առաջարկվում է անցկացնել Բավրայի սահմանային անցակետում աշխատող սահմանապահների/ուստիկանության ծառայողների ուսուցում, հատկապես փաստաթղթերի կեղծման, թրաֆիքինգի զոհերի, մարդկանց ապօրինի սահմանահատումների, մաքսանենգ ճանապարհով թմրանյութերի տեղափոխման դեպքերի բացահայտման, ապրանքների ներկրման/արտահանման արգելման և սահմանափակման թեմաներով ուսուցում. Բավրան ընդգրկված/ներառված չէ ԵՄԽԽ-ի նախագծի շրջանակում կարողությունների զարգացման ուղղությամբ իրականացվող աշխատանքներում կամ ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի

կողմից իրականացվող ,SCIBMԵ նախագծի աշխատանքներում:

## **Ձվարթնոց միջազգային օդանավակայան**

### Առաջարկություն 1-ին.

Առաջարկվում են խորացված դասընթացներ, մասնավորապես՝ ,ուսուցել ուսուցողներին մոտեցման վրա հիմնվող դասընթացներ հետևյալ ուղղություններով.

- Կեղծված փաստաթղթերի բացահայտում,
- Ռիսկերի նկարագրերի կազմում/ռիսկերի կառավարում,
- Անդրազգային հանցավորություն,
- Երկրորդային գծի հսկողության ընթացակարգեր,
- Հարցաքննման եղանակներ,
- Մարդկանց թրաֆիքինգ և թրաֆիքինգի զոհերի բացահայտում:

## **Ուսումնական կենտրոն.**

### Առաջարկություն 1-ին.

Մշակել և ,ուսուցել ուսուցողներին վերապատրաստման մոդուլների կիրառման միջոցով ինստիտուցիոնալ հիմքերի վրա դնել հետևյալ թեմաներով խորացված մասնագիտացված դասընթացների անցկացումը.

- Ժամանակակից (միասնական) սահմանային կառավարման հասկացություններ,
- Կեղծված փաստաթղթերի բացահայտում,
- Ռիսկերի նկարագրերի կազմում/ռիսկերի կառավարում,
- Փաստաթղթերի երկրորդ գծի հսկողության ընթացակարգեր,
- Հարցաքննման եղանակներ,
- Մարդկանց թրաֆիքինգ և թրաֆիքինգի զոհերի բացահայտում,
- Միգրացիա և առողջություն
- Անդրազգային հանցավորություն և ահաբեկչություն,
- Այլ:

